

ՊԱՏՄԱԿԱՆ

ԱԶԱՊԱՀԵԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Մուտք

Աջապահեան ընտանիքը Հայ Եկեղեցւոյ կեանքին մէջ, ընդհանրապէս, եւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պատմութեան մէջ, մասնաւորաբար, ունեցած է շատ հիմնական պարտականութիւն եւ պաշտօն. ըլլալ պահապանը Սուրբ Գրիգոր Լուսաւորչի Աջին - սկզբնական շրջանին, եւ այլ սրբութեանց՝ յետագային: Աջապահեան ընտանիքը այս պաշտօնը կատարեց 13-րդ դարու վերջին տասնամեակէն մինչեւ 19-րդ դարու կէսերը (շուրջ 570 տարուան ժամանակաշրջան մը) եւ արգելք եղաւ Լուսաւորչի Աջի եւ այլ սրբութեանց կորուստին կամ «գողութեան»:

Խօսիլ Աջապահեան ընտանիքին մասին կը նշանակէ փորձել հաստատել նաեւ անոր ծագումը: Պատմական տուեալները պակաս կամ հակոտնեայ են իրարու: Ընդհանրապէս ընդունուած կարծիքը այն է որ այս ընտանիքը ծագում առաւ 15-րդ դարու կիսուն: Այլ կարծիք մը, ներկայացուած Եփրեմ Կաթողիկոսին կողմէ, այս ընտանիքին ծագումը կը դնէ 13-րդ դարու աւարտին եւ անոր հիմնադիրը կը նկատէ Յովհաննէս Արքաեղբայրը: Ալիշան, Օրմանեան, Կիւլէսէրեան եւ ուրիշներ կը մերժեն այս կարծիքը եւ համամիտ են առաջին վարկածին: Այս ուսումնասիրութեան նպատակն է փաստել Յովհաննէս Արքաեղբոր պատմական գոյութիւնը եւ փորձել վերակառուցել Աջապահեան ընտանիքին տոհմածառը:

Ա. Աջապահեան Ընտանիքին Ծագումը

Աջապահեան ընտանիքին պատմութիւնը կազմելու առաջին փորձը կատարած է Եփրեմ Ա. Սսեցի Կաթողիկոս իր «Յուցակ Ազգաբանութեան Ազգիս Աջապահից»¹ գործին մէջ, զոր բանաստեղծական ձեւով եւս գրած է²: Աջապահեան ընտանիքին մասին կը խօսին նաեւ Ալիշան³, Օրմանեան⁴ եւ զանազան ձեռագիրներու յիշատակարանները:

Եփրեմ Կաթողիկոս իր տոհմին պատմութիւնը գրած ատեն, կը հաստատէ թէ ընտանիքին նախահայրը Յովհաննէս Արքաեղբայրն է. «Քանզի առ ի Յօհաննու եպիսկոպոսէ՝ եղբոր Հեթմոյ թագաւորին Հայոց սկսեալք» եւ քանի մը նախադասութիւն վերջ կը շարունակէ ըսելով՝ «նախ եւ յառաջ՝ Յօհան եպիսկոպոս՝ եղբայր թագաւորին հայոց Հեթմոյ երկրորդի, որդւոյ Լեւոնի երրորդի⁵»: Հետեւաբար, Յովհաննէս Արքաեղբայր Լեւոն երրորդ թագաւորի (1271-1287) տղուն՝ Հեթում երկրորդ թագաւորի⁶ (1287-1307)

¹ Հ. Յ. Տաշեան, Յուցակ Հայերէն Ձեռագրաց, Ձեռագիր թիւ 90, Վիեննա, 1895, էջ 359 (Եփրեմ Կաթողիկոսէն եղած մէջբերումները յետ այսու պիտի նշուին որպէս Եփրեմ Կաթողիկոս):

² Հ. Ղ. Ալիշան, Սիսուան, Վեներաիկ, 1901, էջ 220-221:

³ Նոյն տեղը, էջ 219:

⁴ Մ. Արք. Օրմանեան, Ազգապատում, հ. Բ., Մասն Գ., Պէյրոս, 1960, էջ 2937-2940:

⁵ Հ. Յ. Տաշեան, նշ. աշխ., էջ 359:

⁶ Հեթում թագաւոր լատին կրօնաւոր (ֆրանսիսկեան) էր, երբ իր հայրը՝ Լեւոն Գ. թագաւոր էր: Ան իր վրայ

եղբայրն էր: Ալիշան կը մերժէ կապ մը տեսնել Հեթում Երկրորդին եւ Յովհաննէս Արքաեղբոր միջեւ. «Քանզի բազում անգամ յիշեցաւ Աջապահից տոհմն, արժան համարիմ աստանօր, զի Եփրեմ կաթողիկոս գրելով զպատմութիւն կաթողիկոսաց Հայոց, առանձինն խնամով գրէ եւ զիրոց նախնեաց. բայց սխալէ յոյժ նախահաւ իւրոյ տոհմին ասելով զՅովհաննէս Եպիսկոպոս եղբայր Բ. Հեթմոյ եւ որդի Բ. Լեւոնի, որպէս համարի. այլ նոցա չէ եղեալ այդպիսի որդի կամ եղբայր. եւ ոչ է շփոթել ընդ Յովհաննու Եպիսկոպոսի եղբոր Ա. Հեթմոյ, որոյ չէր մտեալ ի կարգ աշխարհի, եւ զայն որոշէ ինքն Եփրեմ»⁷:

Օրմանեան, իր «Ազգապատում» գրքին մէջ, անդրադառնալով Աջապահեան տոհմին՝ կը հաստատէ թէ «Եփրեմ կաթողիկոս Աջապահեանց տոհմէն՝ կ'ուզէ իբր նախահայր ցուցնել Հեթում Բ.-ի եղբայր եւ Լեւոն Գ.-ի որդի Յովհաննէս Եպիսկոպոս մը, եւ անկէ սկսելով կը կազմէ Աջապահեան սերունդ մը, Տէր Եղիազար, Յովհաննէս Եպիսկոպոս, Տէր Եղիազար, Մահտեսի Մինաս, Տէր Սահակ, Տէր Եղիազար, Տէր Յուսիկ, Տէր Մարկոս եւ վերջապէս տասներորդ Աջապահ, ինքն Եփրեմ Կաթողիկոս: Բայց արքայազարմ Յովհաննէս Եպիսկոպոս միայն Հեթում Ա.-ի եղբայրը կայ, նա ալ կուսակրօն մնացած է, որով հիմէն կը խախտի Աջապահեան Եփրեմի կարծիքը, եւ չկրնար ալ ընդունուիլ ենթադրեալ Յովհաննէսին թոռան թոռը կոչուած Մինասին գոյութիւնը»⁸:

Օրմանեան շարունակելով իր «հաստատումները» եւ քաղելով զանոնք Միսուանէն, Աջապահեաններուն ծագումը կ'ուզէ տանիլ մինչեւ 15-րդ դարու կէսերը՝ Մուսաբէգեանց կաթողիկոսին (1439 – 1446) օրերը. «Ուրիշ դրութեամբ Աջապահեաններուն սկզբնաւորութիւնը կը հասնի Մուսաբէգեանցի ժամանակին, երբ Լուսաւորիչի աջին անյայտանալէն ետքը, առձեռն մնացած երեք աջերը, զՍեղեւստրոսին, զՆիկողայոսին եւ զՊարսամայն, եւ Վահկայ Ս. Նշանը, կաթողիկոսին ձեռքէն կ'առնեն, եւ կը յանձնեն Հեթում Խազենց անձի մը պահպանութեան, մականուանեալ Սպիտակ, որ յետոյ քահանայացած, եւ Սպիտակ Երէց անունով ճանչցուած է»⁹:

Ալիշան Յովհաննէս Արքայեղբայրը կ'ուզէ 15-րդ կամ 16-րդ դարուն մէջ տեսնել. «Դարձեալ սխալէ ի Յովհաննէ անտի ազգապետէ Աջապահից ցՄինաս թոռն թոռին նորա (մահացած 1613-ին) 300 ամս ժամանակ տալով. ապա հարկ է թէ Յովհաննէսն այն Եպիսկոպոս նախահաւն իւր, ո ոք եւ իցէ, ոչ ի սկիզբն ԺԴ. դարու, այլ ԺԶ-ին կամ գէթ ի կէս ԺԵ-ին կացեալ իցէ»¹⁰:

Հակառակ այս կարծիքներուն, հարցը կը մնայ անլոյծ, որովհետեւ ո՛չ Ալիշան եւ ո՛չ ալ Օրմանեան կրցած են փաստել կամ հերքել Յովհաննէս Արքաեղբոր գոյութիւնը: Հաւանաբար շփոթ յառաջացնող պատճառներէն մէկը Յովհաննէսի «Արքաեղբայր» կոչումն է: Պատմականօրէն ճիշդ է, ինչպէս Ալիշան կը հաստատէ, որ Հեթում Երկրորդ թագաւորը Յովհաննէս անունով եղբայր չէ ունեցած: Ոչ ալ ան Հեթումի «հոգեւոր եղբայր»ներէն մէկն է, որովհետեւ Յովհաննէս հայ հոգեւորական էր,¹¹ մինչ Հեթում լա-

առած էր Եղբայր Յովհաննէս անունը (տե՛ս Մ. Արք. Օրմանեան, Ազգապատում, հ. Բ., Մասն Ա., Պէյրոս, 1960, էջ 1708-1709):

⁷ Հ. Ղ. Ալիշան, նշ. աշխ., էջ 219:

⁸ Մ. Արք. Օրմանեան, Ազգապատում, հ. Բ., Մասն Գ., Պէյրոս, 1960, էջ 2938-2939:

⁹ Նոյն տեղը, էջ 2939-2940:

¹⁰ Հ. Ղ. Ալիշան, նշ. աշխ., էջ 220:

¹¹ Մ. Արք. Օրմանեան, նշ. աշխ., Մասն Ա., էջ 1708-1709

տին կրօնաւոր դարձաւ: Հետեւաբար ոչ արենակցական եւ ոչ ալ հոգեւոր կապ կայ երկուքին միջեւ: «Արքանդբայր» կոչումը Կիլիկեան շրջանին գործածուած ածական մըն էր¹²: «Հեթում Ա.-ի եղբայրը՝ Յովհաննէս Եպիսկոպոսը, որ Գոների վանքին առաջնորդ եղաւ, Արքայ-եղբայր կոչումը ունի»¹³:

13-էն մինչեւ 14-րդ դարու զանազան ձեռագիրներու յիշատակարանները կը խօսին եւ կը փաստեն Յովհաննէս Արքանդբայր գոյութիւնը եւ Հեթում թագաւորի «եղբայր» ըլլալը:

1. 1600 թուականին, Բաղէշի մէջ ընդօրինակուած Գործք Առաքելոցի մը մեկնութեան յիշատակարանին մէջ կը կարդանք. «Առ խնդրադաւն համառատիս, Տէր Յովհաննէս Արքանդբայր եւ եպիսկոպոս նահանգաց Աստուածապահ զղեկին Մաւկունի, եւ մասին ինչ Բարձրբերդոյ, եւ նոյն տեսուչ հռչակելի Սբ. Ովստին Գոներոյ...»¹⁴:
2. Գործք Առաքելոցի ուրիշ մեկնութեան մը յիշատակարանը, ընդօրինակուած 18-րդ դարուն, կը յիշատակէ. «Եւ յառաջ ամօք ի հրամայական խնդրոյ Տեառն Յովհաննէսի ՅԵՂԹՈՐԷ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՀԱՅՈՅ ՀԵԹՄՈՅ [ընդգծումը մերն է]»¹⁵:
3. 1283-ին Գէորգ Սկեւռացի Վարդապետին աշխատասիրութեամբ պատրաստուած Վարք Սրբոցի մը յիշատակարանին մէջ կը կարդանք հետեւեալը. «Դ[րուստ ի Սբ. Առաքեալն եւ Աւետարանիչն Յոհան]նէս, ի պատկառելի խնդրոյ Յովհաննու եպիսկոպոսի, եղբար] բարեպաշտ արքային Հայոց [Հեթմոյ], ի թուականին ՉԼԲ (1283)¹⁶»:
4. 1289-ին Վարդան Վարդապետ Կիլիկեցիի կողմէ ընդօրինակուած էակաց Գրքին յիշատակարանին մէջ կը կարդանք. «Աղաչեմ յիշել զմեզ ի բարին Քրիստոսի զՎարդան սպասաւոր բանի, հանդերձ ծնաւղաւքն մեր եղբարք, ընդ նմին եւ զուսուցիչն իմ զՏէր Յոհաննէս զարքայեղբայր Հայոց Հեթմոյ»¹⁷:

Վերոյիշեալ մէջբերումները կը հաստատեն թէ Յովհաննէս Արքանդբայր պատմական անձ մըն էր, ապրած 13-րդ դարու աւարտին: Իր մասին աւելի յստակ գաղափար մը կ'ունենանք, երբ կը կարդանք հետեւեալ յիշատակարանը, նոյնինքն Յովհաննէս Արքանդբայր գրչէն.

«ԵՍ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ, դատապարտ ծառայ Աստուծոյ եւ նրա ստ կրտսեր իսկ պաշտօնակից, ՈՐԴԻ ՔՐԻՍՏՈՍԱՍԷՐ ԵՒ ԲԱՐԵՊԱՇՏ ԻՇԽԱՆԱՅ ԻՇԽՈՂԻՆ ԿՈՍՏԱՆԴԵԱ ԹԱԳԱՊԱՀԻ ԵՒ ԱՐՔԱՅԱՏՈՐ ՀԱՅՈՅ [ընդգծումը մերն է]»¹⁸:

¹² Նոյն տեղը, էջ 1793 – 1795:

¹³ Նոյն տեղը, էջ 1793:

¹⁴ Դ. Արք. Պօղարեան, Մայր Յուցակ Զեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Բ., Երուսաղէմ, 1967, էջ 237; հմմտ. հ. Բ., էջ 135; հ. Գ., Երուսաղէմ, 1968, էջ 13, 28, 31, 38, 133, 237, 248, 252, 298, 351:

¹⁵ Դ. Արք. Պօղարեան, նշ. աշխ., հ. Ե., Երուսաղէմ, 1971, էջ 307:

¹⁶ Դ. Արք. Պօղարեան, նշ. աշխ., հ. Ա., Երուսաղէմ, 1966, էջ 306:

¹⁷ Դ. Արք. Պօղարեան, նշ. աշխ., հ. Զ., Երուսաղէմ, 1972, էջ 18:

¹⁸ Դ. Արք. Պօղարեան, նշ. աշխ., հ. Դ., Երուսաղէմ, 1969, էջ 122:

Աւելի լուսաբանիչ եւ ընդարձակ հաստատում մը եւս ունինք, դարձեալ Արքա-եղբոր գրչէն, Դանիէլ Վարդապետ Ասորիի «Մեկնութիւն Սաղմոսաց Դաւթի» գրքի յիշատակարանին մէջ, 1289 թուականէն.

«Դատապարտս այցելու եւ անիմաստ ըաբուն արքայեղբայր Հայոց Յովհաննէս, որ երբեմն Պաղտոյն որդի քրիստոսարեալ եւ ամենընտիր երջանիկ եւ բարեպաշտ իշխանաց իշխանին եւ թագապահի Պրին պարոնին Հայոց Կոստանդեա մականուն Մոզոն կոչեցեալ, յիուրինեանց տոհմէ՝ որոց յիշատակն արհնեալ յԱստուծոյ եւ յաստուածայնոց լիցի, ամէն: ... Արդ ի թուականիս Հայոց 21Ը = 1289 գրել ետու զեռափափաք եւ իմաստատու հոգէխիւթ եւ աստուածարեալ բանքս սրբոյն Դանիէլ մեծ վարդապետին եւ հոգէխառն իմաստնոյ Սարգսի նորակերտ գրչի վանից իրիցու՝ որոյ Տէր ողորմեսցի (էջ 229բ)¹⁹»:

Նոյն ձեռագրի յիշատակարանին մէջ, հինգ անգամ եւս յիշուած է Յովհաննէս Արքաեղբայրը, իսկ գլխաւոր յիշատակարանին մէջ (էջ 439ա), Յովհաննէս կրկին կը յիշէ իր ո՞վ եւ որո՞ւ զաւակ ըլլալը:

Այս մէջբերումները, եւ մասնաւորաբար վերջին երկուքը, յստակ կերպով ցոյց կու տան մեզի Յովհաննէս Արքաեղբոր պատմական գոյութիւնը: Ո՞վ էր ուրեմն Յովհաննէս Արքաեղբայրը: Նախկին անունով Պաղտին, նախ աշխարհական եւ ապա եկեղեցական դարձած է. «Սա նախ ի կարգ աշխարհական, մտեալ՝ ծնանի որդիս ինքնեան, ապա առնու զայն աստիճան որ համայնից ի ըղձական²⁰», ինչպէս կը յիշէ Եփրեմ կաթողիկոս: Ծննդեան թուականը յստակ չէ. Պօղարեան Սրբազան ծննդեան թուականը կը դնէ շուրջ 1259-ին²¹, իսկ մահուան թուականը թէ՛ Պօղարեան, եւ թէ՛ Աճառեան կը դնեն 1289-ին²²:

Ըստ Վարդան Վարդապետի յիշատակարանին, Յովհաննէս Արքաեղբայր ողջ ըլլալու էր 1289-ին եւ անկէ անդին, որովհետեւ երբ Հեթում Բ. թագաւորը Լուսաւորչի Աջը գնեց եգիպտացիներէն, զայն յանձնեց Յովհաննէս Արքաեղբոր առ ի պահպանութիւն, ինչպէս կը յիշատակէ Եփրեմ կաթողիկոս իր ազգատոհմի պատմութեան չափաւոր բանաստեղծութեան մէջ. «Նախ եւ յառաջ՝ Յօհան եպիսկոպոս, եղբայր թագաւորին Հեթմոյ երկրորդի, որդւոյ Լեւոնի երրորդի: Քանզի յաւուր սորա ազատեցաւ աջ սրբոյն Գրիգորի Լուսաւորչի յեգիպտոսէ»²³:

Յովհաննէս Արքայեղբոր եկեղեցական եւ վարչական գործունէութեան մասին ոչինչ ծանօթ է, բացի այն իրողութենէն որ առաջնորդն էր «նահանգաց աստուածապահ դղեկին Մօլեւօնի, եւ ինչ որ մասին Բարձրբերդոյ եւ նոյն տեսուչ հռչակելի Սբ. Ուխտին Դառներոյ»²⁴: Արդեօ՞ք այս Յովհաննէսը նոյն Յովհաննէս է զոր Օրմանեան կը յիշէ իր «Ազգապատում»ին մէջ, զոր վերեւ յիշուեցաւ («Հեթում Ա.-ի եղբայրը՝ Յովհաննէս Եպիսկոպոսը, որ Գոների վանքին առաջնորդ եղաւ, Արքայ-եղբայր կոչումը

¹⁹ Մ. Վրդ. Քէշիշեան, Յուցակ Հայերէն Ձեռագրաց Զմամտի Վանքի Մատենադարանին, հ. Ա., Վիեննա, 1964, էջ 242:

²⁰ Հ. Ա. Ալիշան, նշ. աշխ., էջ 220:

²¹ Ն. Արք. Պօղարեան, Հայ Գրողներ, Երուսաղէմ, 1971, էջ 198:

²² Հ. Աճառեան, Անձնանունների Բառարան, հ. Գ., Երեւան, 1972, էջ 599; Ն. Արք. Պօղարեան, Հայ Գրողներ, Երուսաղէմ, 1971, էջ 199:

²³ Եփրեմ Կթղ., Պատմութիւն Աշապանից, էջ 51:

²⁴ Ն. Արք. Պօղարեան, Յուցակ Ձեռագրաց Ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հտ. 2., Երուսաղէմ, 1972, էջ 18:

ունի»²⁵): Այնպէս կ'երեւի թէ ան բարձրաստիճան եկեղեցական մըն էր, ինչպէս նաեւ քաջալերողը եւ հաւանաբար նաեւ հովանաւորողը Գէորգ Վարդապետ Լամբրոնացիին, որպէսզի աստուածաշնչական մեկնութիւններ կատարէ²⁶, ինչ որ ցոյց կու տայ իր սէրն ու հոգածութիւնը կրօնական գրականութեան հանդէպ:

Յովհաննէս Արքայեղբօր մասին ուրիշ տեղեկութիւն չունինք, դժբախտաբար, բայց իր գրչէն ունինք յիշատակարան մը, գրուած Երուսաղէմի անկման (1187) մասին:

«Զոր մարգարէքս սպառնացան,

Երուսաղէմ յորժամ մեղան,

Առ մեզ կրկին ի յանկ ելան,

Ի դառն աւուրքս, որ այժմ հասան:

Զի ի վեց հարիրս Հայոց թուական [1187]

Յերեսուն եւ վեց նորին շրջան,

Եւ յիսուն ամին լրման

Հռոմայեցւոցն իշխանութեան:

Յովսէփ արքայ իսմայելեան,

Որք Թուրքիման ազգ կոչեցան,

Յեզ[ի]պտոսէ գոլով իշխան,

Մինչ ի Բաբել յԱսորեստան:

Զգեաց նա ձեռն յանդգնութեան,

Ի նուրբ սահման քրիստոնէութեան,

Քան զի մեղաւքն կորացան,

Եւ մեր իշխանքն յաղթեցան:

Գերեաց զքաղաքն աստուածական,

ԶԵրուսաղէմ եւ իւր սահման,

Արիւն բնակչացն, որ անդ գտան,

Իբր զշուր ի զոհոս հեղան:

Մարմինքն անկեալ ոչ թաղեցան,

Եւ սուրբ տաճարքն խրթնացան,

Դրացիքն զմեզ ծիծաղեցան,

Եւ սպառնալիքս կատարեցան:

Իսկ զաւետիս դարձին որ տան,

Աստ մարգարէքս աստուածաբան,

Յարեւմտից հնչէ մեզ ձայն,

Պետրոս ի Հռովմ մեծն փախան:

Զի անդ ողբոցս հասեալ գուժան,

Կական բարձեալ ի սուգ նստան,

Ի հայրապետէն առին հրաման,

Զխաչ բարձին եւ աստ հեղան:

²⁵ Մ. Արք. Օրմանեան, Ազգապատում, հ. Բ., Մասն Ա., Պէյրոս, 1960, էջ 1793:

²⁶ Ն. Արք. Պօղարեան, Մայր Յուցակ Զեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Ա., Երուսաղէմ, 1966, էջ 273-274; հմմտ. «ՄԻՈՆ» պաշտօնաթերթ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան, ԼՂ տարի, թիւ 4, Ապրիլ. Երուսաղէմ, 1964, էջ 99-100:

Գոռո՛ց տուեալ ազ[գ]ք զանազան,
 Բիւրք բիւրուց զաւրք միաբան,
 Առագաստեալ ընդ ծով գան,
 Ի Պտղոմիդեայ զետեղեցան:

Փոսս հատին եւ ամրացան,
 Եւ անդրական այս երկրորդ ամ,
 Ի պատերազմէն անխափան,
 Եւ մահ ի դասս յերկոսեան:

Այլ խաչընգալքն փութով գան,
 Յերուսաղէմն վերնական,
 Եւ նոցին եղբարքն, որ աստ մնան,
 Զմարտն դրդել ոչ ձանրաձան:

Հռոմայ արքայն, որ Ալաման,
 Բիւրուք ի յայս յոյսս մեռան,
 Սակայն մնացեալքն ոչ կասեցան,
 Եւս բազում ընդ ծովն գան:

Այժմ Փռանգաց Փիլիպ արքայն,
 Եւ Ընելիզացն նմին նման,
 Լծեալ ի գործ տեառն հասան,
 Եկին առ մեզ ի չորրորդ ամ:

Սոքաւք սպասեմք փրկութեան,
 Եւ Աստուծոյ մեր աւգնութեան,
 Զի զմարգարէիցս դարձին զբան,
 Վայելելոյ գտցուք արժան:


Ամէն»²⁷:

Յովհաննէս Արքայեղբոր պատմական գոյութիւնը այլեւս կասկածի տակ չի կրնար մնալ: Հեթում Երկրորդ թագաւոր իրեն յանձնեց Ս. Գրիգոր Լուսաւորչի Աշին պահպանութիւնը եւ իր որդիները շարունակեցին նոյն պաշտօնը մինչեւ 19-րդ դարու կէսը:

Նախքան Աջապահեան ընտանիքի պատմութեան անցնիլը, պէտք է այստեղ հաստատենք որ գոյութիւն ունեցող տեղեկութիւնները հաստուկտոր ու տարտամ են: Գըլխաւոր աղբիւրը, զոր վաւերական կրնանք կոչել որոշ վերապահումներով, Եփրեմ կաթողիկոսի գրածն է: Նկատի ունենալով որ Եփրեմ կաթողիկոս Աջապահեաններուն պատմութիւնը գրած է Յովհաննէս Արքայեղբորմէն շուրջ 500 տարիներ ետք, անոր պատմութեան առաջին բաժինը, մինչեւ Մինաս (1613) հաւանաբար բերանացի աւանդութեամբ պահուած է ընտանիքին մէջ, իսկ երկրորդ բաժինը, Մինասէն մինչեւ Եփրեմ (1613-1771) աւելի ընդունելի են եւ պատմական: Եփրեմ կաթողիկոսէն ետք, Ալիշան առաջինն էր որ զբաղեցաւ Աջապահեաններով: Մերժելով հանդերձ Եփրեմ կաթողիկոսին տեսակէտը, Ալիշան Աջապահեաններուն ծագումը կը հասցնէ մինչեւ 15-րդ դարու կէսերը եւ որպէս նախահայր կ'ընդունի Հեթում Սպիտակ Երէջ հազոնցը, ինչպէս տեսանք: Յստակ չէ եթէ օգտագործած է Եփրեմ Կաթողիկոսի գրածը:


²⁷ Ն. Արք. Պողարեան, Մայր Յուցակ Ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Բ., Երուսաղէմ, 1963, էջ 237:

Հստ Ալիշանի, Աջապահեաններուն ընտանեկան ծառը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը.




Ալիշան կը սխալի երբ Մինաս եւ Սահակ աջապահները Եղիազար Բ.-ի որդիները կը նկատէ, որովհետեւ Եփրեմ կաթողիկոսի պատմութեան մէջ, «այս մահտեսի Մինաս աջապահին եղեն բ որդիք. անուն առաջնոյն Սահակ եւ երկրորդին յակօբ»²⁸; Ալիշանի ցանկին մէջ, Եփրեմ կաթողիկոս իններորդ սերունդն է, մինչ Եփրեմ կաթողիկոս յստակ կերպով ինքզինք «տասներորդ սերունդ» կը նկատէ:

Հստ Եփրեմ կաթողիկոսի, Աջապահեաններու ընտանեկան ծառը հետեւեալ պատկերը ունի.



²⁸ Եփրեմ Կթղ., Պատմութիւն Աջապահից, էջ 51:



Ինչպէս այս զոյգ ցանկերը ցոյց կու տան, 1468/1469 թուականներուն յիշուած Հեթում Սպիտակ Երէց Խազոնցի անունը չի յիշուիր: Ասիկա տարօրինակ կը թուի, որովհետեւ երբ Սիս վտանգի տակ էր 1468/1469 թուականին, Աջերը Կապիտառ փախ-ցրեցան Հեթում Երէցին կողմէ³⁰, զոր Եփրեմ կաթողիկոս չի յիշեր իր պատմութեան մէջ: Իր մասին պատմական ուրիշ տեղեկութիւն չունինք: Նոյնպէս գիտենք որ Կոստանդին Գ. Վահկացի կաթողիկոսի (1430 - 1438) տոհմէն ալ աջապահներ եղած են. «Յայսմ ժամանակի թուի գրաւեալ քահանայական տոհմի միոյ Վահկացոյ զսրբութիւն»³¹: Որո՞նք են այս աջապահները: «Այսպէս կամ այնպէս, առանց շփոթելու այս աւանդութիւններէն ու տարբերութիւններէն, երկու կերպով կարելի է մտածել Աջապահեանց ծագման վրայ.

ա) անոնց բուն ծագումը կապ ունի Ս. Լուսաւորչի Աջին հետ, իբրեւ մասունք եւ մասնատուի կազմութեան ժամանակին եւ ատոր կիրարկութեան հետ նուիրագործութեանց հետ, ասոր ճիշդ թուականը չեմ գիտեր առ այժմ. բայց պահ մը ենթադրելով թէ, ըստ Եփրեմի աւանդածին, Աջապահեանց ծագման ժամանակն է Աջին գերեզարձը (1292 - 1295), այդ չի նշանակեր թէ Յօհան եպիսկոպոսէն առաջ չկային Աջպանք:

բ) Աջապահեանք իրենց ծագմամբ պարզապէս պահապաններն էին Աջին կամ լուսարարը, եւ ո՛չ թէ կաթողիկոս կը պատրաստէին»³²:

²⁹ Ղուկաս Ա. Կաթողիկոս (1731-1737), Միքայէլ Ա. Կաթողիկոս (1737-1758), Գաբրիէլ Ա. Կաթողիկոս (1758-1770), եւ Եփրեմ Ա. Կաթողիկոս (1770-1784) ապագայ կաթողիկոսներ Սոյ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան (1731-1865):

³⁰ Հ. Ղ. Ալիշան, նշ. աշխ., էջ 221:

³¹ Հ. Յ. Տաշեան, նշ. աշխ., էջ 570:

³² Բ. Կթղ. Կիլիկեան, Պատմութիւն Կաթողիկոսաց Կիլիկիոյ, Ամթիլիաս, 1988, էջ 1338:

Բաբգէն կաթողիկոսի հաստատումը ճիշդ է որ Աջապահեանք Աջին պահապաններն էին: Աջին գերեզարձէն առաջ, կաթողիկոսներն էին որ կը պահէին Աջը իրենց մօտ, ինչպէս մեր եկեղեցւոյ պատմութեան մէջ կը տեսնենք: Այս պարագային, հարցը կրկին պէտք է ձեռք առնել եւ հարց տալ, ո՞վ էր Հեթում Սպիտակ Երէցը կամ որո՞նք էին Վահկացի աջապահները³³: Մեր կածիքով, Եփրեմ Կաթողիկոս, իր ընտանիքին պատմութիւնը գրած ժամանակ, դուրս ձգած է բոլոր անոնց, որոնք այդ ընտանիքին մայր ճիւղին մաս չէին կազմեր: Այլ խօսքով, ան գրած է սսեցի աջապահեաններուն պատմութիւնը: Իսկ այս անհատ աջապահներուն անուններուն գոյութիւնը կ'ապացուցուի անով որ ԱԶԱՊԱՀի պաշտօնը միայն Եփրեմ կաթողիկոսի ընտանիքին չէ պատկանած միշտ, այլ ուրիշ արժանաւոր եւ վստահելի մարդիկ եւս կոչուած են այդ պաշտօնին:

Այժմ տեսնենք թէ որո՞նք են այն աջապահները, որոնց մասին կը խօսի Եփրեմ կաթողիկոս:

Բ. Աջապահեան Ընտանիքը

Հստ Եփրեմ կաթողիկոսին, իր նախահայրը՝ Յովհաննէս Եպիսկոպոս եղբայրն էր Հեթում Բ. Թագաւորին, Լեւոն Գ.-ի որդիին: Հեթում «Յօհաննու եպիսկոպոսի՝ եղբօր իւրում յանձնեաց զԱջապահութիւն, որպէս յանձնեցաւ Ղեւտականաց աստուածայինն այն տապանակ, զի Թերեւս առ ի նմանէ սերեալքն որդիք զհարս յաջորդեալք՝ վարեսցեն այսու սպասաւորութեամբ»³⁴:

Յովհաննէս Եպիսկոպոսին յաջորդեց իր որդին՝ Եղիազար Քահանայ, որուն գերեզմանը կը գտնուի «ի սուրբ եկեղեցին Մանթէշու, որ առ տորոս [Տաւրոս] լերամբ ի սահմանս կիլիկիոյ»³⁵:

Եղիազարի յաջորդեց իր որդին՝ Յովհաննէս, որ նախապէս աշխարհական էր եւ «գոլ յետոյ եպիսկոպոս ըստ օրինակի հաւոյն իւրոյ»³⁶: Յովհաննէսին յաջորդեց իր որդին՝ Եղիազար Բ.-ը, որուն «գերեզմանն է յԱտանա[յ]ի սուրբ Տելլի կոչեցեալ վայր»:

Եղիազարին յաջորդեց իր որդին՝ մահտեսի Մինասը, որ իսկական Աջապահ դեր կատարեց, Ս. Գրիգոր Լուսաւորչի Աջը եւ այլ սրբութիւնները պահելով եւ կողոպուտէ ազատելով: Մահացած է 1613 թուականին եւ գերեզմանը կը գտնուի «ի սուրբ Աստուածածին եկեղեցին ի Սիս, որպէս գրեալ է ի դուռն սուրբ աստուածածին եկեղեցւոյն»³⁷: Հաւանական է որ շատ յառաջացած տարիքին մահացած ըլլար, որովհետեւ «մեռաւ մեծաւ բարեպաշտութեամբ եւ լցեալ աւուրբ»³⁸ ինչպէս կը հաստատէ Եփրեմ Կաթողիկոս: Մահտեսի Մինասին յաջորդեց իր աւագ որդին՝ Սահակ, որ քահանայացաւ եւ «զսմանէ ասեն գոլ յոյժ ձայնաւոր եւ երաժիշտ, այլեւ երկայնաւորեք ժամանակօք կեցեալ աշխարհի ըստ նմանութեան նահապետին Իսահակայ»:

Գալով իր եղբօր՝ Յակոբին, նախապէս երէց կոչուած, ամուսնացեալ քահանայ ըլլալուն պատճառով, եւ իր կնոջ մահէն ետք, վանք մտած եւ վարդապետ ձեռնադրու-

³³ Նոյն տեղը:

³⁴ Եփրեմ Կթղ., Պատմութիւն Աջապահից, էջ 51:

³⁵ Նոյն տեղը:

³⁶ Նոյն տեղը:

³⁷ Նոյն տեղը:

³⁸ Նոյն տեղը:

լած է եւ հասած մինչեւ եպիսկոպոսական աստիճանին: Եփրեմ կաթողիկոս կը պատմէ թէ ան էր «յոյժ բանիբուն եւ գիտնական, մանաւանդ քաջահմուտ յարուեստս աստղաբաշխութեան: Եւ են առ մեզ ի սմանէ ասացեալ ոտանաւորք եւ ասացուածք համեղութեամբ առլցեալք»³⁹: Գանձակեցին զինք «մեծ վարդապետ, այր իմաստուն»⁴⁰ կ'անուանէ: Ալիշան անոր անուան կը կցէ Հռետոր տիտղոսը «ոչ գիտեմք վասն որպիսեաց բանից»⁴¹, իսկ Բարգէն կաթողիկոս կը բացատրէ թէ «հռետոր ըսուած է պարզապէս տաղասաց ըլլալուն»⁴²: Իրմէ յիշատակարան մը հասած է 1286-ին ընդօրինակուած Ճաշոցէ մը⁴³. «Ի հայրապետութեան Տ. Տէր Մինաս կաթողիկոսին՝ թվականիս հայոց Ռշէ (1628) նուաստս յամենայնի Յակոբ Սսեցի, որ այժմ եմ փակակալ ի դուն Սուրբ Լուսաւորչի: Ի Կիլիկիայ այս որ ԻՄԱՍՏԱՐԱՆ ասի, բ. եւ գ. (երկու, երեք) եղբօր հետ ելայ գնացի սանդըխտով. թվականս նորա որ ի դռան վերայ կայր՝ կարդացի: Որ է օրինակ այս. 'Կատարեցաւ յարմարումն շինութեան Հիւանդանոցիս' հրամանաւ մեծաւ փառաւ Բրիստոսասէր Թագուհույ Զապէլի ի թվականութեան Հայոց ի Ո եւ Ղ (1241)»⁴⁴: Յակոբ ծանօթ եղած է իր տաղերով, որոնք կը գտնուին զանազան մատենադարաններու մէջ: Պօղարեան Սրբազան «ՀԱՍԿ»ի⁴⁵ եւ Քիւրտեան «ՍԻՈՆ»ի⁴⁶ մէջ զբաղած են իր տաղերով: Կազմած է զաւազանագիրք մը, զոր Պօղարեան հրատարակած է «ՀԱՍԿ»ին մէջ⁴⁷: Կոստանեանց իր «Նոր Ժողովածու»ին թիւ Դ. պրակին մէջ⁴⁸ ունի իր տաղերէն մէկը, գրուած 1635-ին: Տաշեան իր Յուցակ Ձեռագրացին մէջ կը յիշէ իր տաղերէն երեք հատ⁴⁹: Իր ծննդեան թուականը անծանօթ է, իսկ մահուան թուականը 1650-էն ետք ըլլալու է. «Յակոբ Սսեցին ոեւէ բանաստեղծական տաղանդ ցոյց չի տար եւ ոչ իսկ հանգագիր կ'երեւի: Լեզուն չէ յղկուած եւ երբեմն անտեղի կերպով Թըրքերէնով աղճատուած՝ խժալուր է: Ճիգ մը կայ բան մը ըսած ըլլալու եւ սակայն առանց դոյզն յաջողութեան: Գուցէ ատոր համար է որ իրմէ շատ բան չէ արտագրուած, քանի որ վստահօրէն իրեն պէս միջակութիւն մը արտադրելու հիւանդութենէն բռնուած ըլլալու է»⁵⁰:

Սահակ Աջապահին յաջորդեց իր որդին՝ Եղիազար Գ., որ հինգ զաւակներ ունեցաւ, որոնցմէ երեքը՝ Յուսիկ, Արիստակէս եւ Սուքիաս քահանայ ձեռնադրուած են, «իսկ երկուքն միայն աստիճանաւորք Վրդանէս Կորովամիտն եւ քաջաբան եւ Սահակ»⁵¹: Արիստակէս քահանայի գերեզմանը կը գտնուի «ի յԱտանա ի սուրբ Ստեփան-

³⁹ Նոյն տեղը:

⁴⁰ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երեւան, 1961, էջ 262, 265:

⁴¹ Հ. Ղ. Ալիշան, նշ. աշխ., էջ 223:

⁴² Բ. Կթղ. Կիլիկեան, նշ. աշխ., էջ 302:

⁴³ Դ. Արք. Պօղարեան, «Յակոբ Երեց Աջապահ Սսեցի», «ՀԱՍԿ», 1945, էջ 28; «Արարատ», 1870, էջ 347:

⁴⁴ Մ. Քէլէշեան, Սիւ-Մատեան, Պէյրութ, 1960, էջ 195; Բ. Կթղ. Կիլիկեան, նշ. աշխ., էջ 302, 487; «Արարատ», 1888, էջ 354:

⁴⁵ Դ. Արք. Պօղարեան, «Յակոբ Երեց Աջապահ Սսեցի», «ՀԱՍԿ», 1945, էջ 28-31:

⁴⁶ Յ. Քիւրտեան, «ՍԻՈՆ» պաշտօնաթերթ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան, ԼԹ տարի, թիւ 10, Հոկտեմբեր. Երուսաղէմ, 1965, էջ 362-367:

⁴⁷ Դ. Արք. Պօղարեան, «Յակոբ Երեց Աջապահ Սսեցի», «ՀԱՍԿ», 1945, էջ 29:

⁴⁸ Կ. Կոստանեանց, Նոր Ժողովածու, Պրակ Դ., Միջնադարեան Հայոց տաղեր եւ ոտանաւորներ, Վաղարշապատ, 1909, էջ 19-21:

⁴⁹ Հ. Յ. Տաշեան, նշ. աշխ., էջ 1122ա.

⁵⁰ Յ. Քիւրտեան, «ՍԻՈՆ» պաշտօնաթերթ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան, ԼԹ տարի, թիւ 10, Հոկտեմբեր. Երուսաղէմ, 1965, էջ 367.

⁵¹ Եփրեմ Կթղ., Պատմութիւն Աջապահից, էջ 52:

նոս եկեղեցին, իսկ Տէր Սուքիաս Քահանային՝ ի սուրբ աստուածածին եկեղեցին ի սիս»⁵²: Տէր Սուքիաս երկարակենցաղ անձ մը եղած է, ապրելով 99 տարի եւ քահանայազործելով 58 տարի:

Տէր Եղիազարին յաջորդեց իր որդին՝ Յուսիկ Քահանան, որ ապրեցաւ 82 տարի եւ քահանայազործեց 53 տարի: «Սորա գերեզմանն է ի սուրբ աթոռն՝ հուպաշտրան կաթողիկոսարանին»⁵³: Առաքինի վարքի տէր անձ մըն էր Յուսիկ Քահանան, սաղմոսերգու եւ «հեզութեամբ եւ խոնարհութեամբ առլցեալ»: Ունեցած է 8 զաւակներ, որոնցմէ երեքը՝ Ղուկաս, Միքայէլ եւ Գաբրիէլ, բարձրացան են Կիլիկիոյ Կաթողիկոսական Աթոռին: Իսկ միւս զաւակներն են Մարկոս, որ քահանայացած էր, Յօհան, Ղուկաս, Մատթէոս եւ Եզեկիէլ, որոնցմէ Ղուկաս (շատ հաւանաբար Ղուկաս կաթողիկոսէն առաջ ծնած) եւ Եզեկիէլ մանուկ կամ երիտասարդ տարիքին մահացած են, իսկ Յօհան «որ դպիր էր յոյժ երժիշտ և ձայնաւոր, եւ Մատթէոս դպիր էր յոյժ կոռովամիտ եւ քաջաբան»⁵⁴: Յուսիկ քահանայի առաջին չորս զաւակներէն զատ, միւսներուն մասին տեղեկութիւն չկրցանք հաւաքել:

Յուսիկ Քահանային յաջորդեց իր որդին Մարկոս Քահանան, որ երկու զաւակներ ունեցաւ՝ Գրիգոր եւ Եփրեմ: Գրիգոր վեց զաւակներ ունեցաւ՝ Միքայէլ, Մանուէլ, Աղեքսանդր, Մանուէլ (երկրորդ նոյնանուն զաւակ մը), Գաբրիէլ եւ Յուսիկ: Վերջին երեքը «նախ քան զհայրն փոխեցան աշխարհէս»⁵⁵: Անդրանիկ զակին՝ Միքայէլի գերեզմանը կը գտնուի Ատանայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ: Մարկոս Քահանայի երկրորդ զաւակը՝ Եփրեմ բարձրացաւ Կիլիկիոյ Կաթողիկոսական Աթոռին՝ 1771-ին:

Գալով վերջապէս Հեթում Երէցին՝ ոչ մէկ տեղեկութիւն գտանք անոր ծննդեան կամ ծագման պարագաներուն մասին, բացի այն տեղեկութենէն թէ երբ Սիս յարձակումի ենթարկուեցաւ 1468/69 թուականին, ան Աջերը առաւ եւ տարաւ Կապիտառ բերդը, Թորոս Եպիսկոպոսին քով առ ի պահպանութիւն կորուստէ եւ յաջորդ տարին՝ 1469/70-ին երբ ժանտախտը տարածուեցաւ Սիսի մէջ, Հաթում Երէց մահացաւ այդ հիւանդութենէն⁵⁶:

Այստեղ հարկ կը նկատենք մէջբերել նաեւ Եփրեմ կաթողիկոսին իր ազգատոհմին մասին գրած ոտանաւոր պատմութիւնը.

«Բարք է բնաբար առ բանական
Սեռս՝ ներհան գոլն ըղձական
Նախանձելոյ վիպագրութեան
Եւ անվըրէպ զրուցաց ըզբան.
Եւ մանաւանդ զիրական
Նախնեացըն վէպ կարգել անձան:
Յերիս հատեալ բաժանեցան
Ամանակաց թիւք կարգեցան.
Յանցեալն, ներկայն եւ յառապայն,

⁵² Նոյն տեղը:

⁵³ Նոյն տեղը, էջ 53:

⁵⁴ Նոյն տեղը, էջ 54:

⁵⁵ Հ. Ղ. Ալիշան, նշ. աշխ., էջ 220-221:

⁵⁶ Բ. Եղիայեան, Սելուկ-Թաթուլ-Մոնկուլ-Օսմանցի Թուրքերու Պատմութիւն, Անքիլիաս, 1989, էջ 304; Հ. Ղ. Ալիշան, նշ. աշխ., էջ 535; Մ. Արք. Օրմանեան, նշ. աշխ., հ. Բ., Մասն Ա., էջ 2159; Բ. Կթղ. Կիւլէսերեան, նշ. աշխ., էջ 52; Մ. Քէլէշեան, նշ. աշխ., էջ 72:

Որով լրանայ այս յաւիտեան:
 Արդ ներկայիս իղձք գիտութեան՝
 Ոչ նեղէ զոք խստիւ այնքան,
 Դատարկախոյզ դառն քննութեան,
 Եւ ապառնեաց գիտելոյ ջան,
 Գրեալ կնքեցաւ միանգամայն
 Ի հրեշտակաց եւ ի մարդկան.
 Որպէս է բանըն տէրունեան,
 Թէ ձեզ որ չէ այս գիտական,
 Հայր եղ իւրում իշխանութեան
 Յայտնեալ եւ ոչ ումեք արժան:
 Իսկ անցելոց իրաց ըզբան
 Եւ եղելոցըն պատմութեան՝
 Լինել սիրող է բընական
 Իմաստասէր ազգ բանական:
 Որպէս եւ իմ եղեալ ըզջան,
Եփրեմ անուն անձն անարժան,
 Կաթողիկոս հայկազնեան,
 Լինել սիրող այսըմ գրութեան:
 Այսու ընծիւ սիրողական
 Վառեալ երբեմն երջանիկն այն,
 Բանիւ մատչէր թախանձական
 Խօսիլ զնախնեանցն իւրական.
 Դնէր առաջի զգութն հայրական
 Եկ ոչ ձրգել յետ կոյս ունկան.
 Զհայրն իմ ասեմ զմեծ քահանայն
Մարկոս անուն այն սրբաբան,
 Ուստի եւ իմ փոյթ եւ ըզջան...»⁵⁷:

ՆԱԽԱՍԱՐԴ ՄԱՐՏՈՅԵԱՆ

Փիլիսոփայութեան եւ բաղդատական կրօններու պրոֆեսոր

⁵⁷ Եփրեմ Կթղ., Պատմութիւն Աջապահից, էջ 57-59: